# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

---

<<        >> __________ 2018թ. | ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
N: ______________________ | հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈւՂԵՐՁ
ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ շիրակցիներ.

Ի սրտե շնորհավորում եմ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Պատմության գիրկն է անցնում ևս մեկ տարի: Տարեմուտի այս պահերին ամեն ոք ծանր ու թեթև է անում արածն ու չարածը, մտովի ամփոփում անցած տարին, իրականացրած ու դեռ չավարտված գործերը:

2017 թվականի ընթացքում մենք ունեցանք բավական հաջողություններ ու ձեռքբերումներ: Համայնքներում կյանքի կոչվեցին տարբեր ծրագրեր, վերանորոգվեցին կրթօջախներ ու մանկապարտեզներ, ճանապարհներ և համայնքային կենտրոններ, բնակարանների գնման վկայագրերի միջոցով բազմաթիվ անօթևաններ ապահովվեցին բնակարաններով: Աշխատանքներ են տարվում մարզում զբոսաշրջության զարգացման, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության բարձրացման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ:

Ամփոփելով անցած տարվա հաջող գործերն ու հաղթանակները, մեր առջև դեռ ծառացած բազմաթիվ խնդիրների լուծմանը պետք է լծվենք եկող տարում:

2018 թվական ենք մտն! մ նոր հ! յսերով: Գալիք տարում պետք է կարողանանք Շիրակի մարզը աղետի գոտուց զարգացման գոտու վերածել: Ծրագրերը շատ են, պետք է ուղղակի զինվենք համբերությամբ և լավատես լինենք:

Սիրելի՛ շիրակցիներ, թող 2018 թվականը բոլորիս համար լինի հաջողության ու բարեկեցության տարի, թող բոլոր օջախներում իշխեն համերաշխությունն ու սերը և Նոր տարում իրականանան մեր սպասումներն ու հույսերը:

Թո՛ղ Նոր տարին խաղաղություն և բարօրություն բերի մեզ բոլորիս:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ